

Պալիատիվ խնամքում հիմնական գործողությունների IAHPC ցանկը

Ճանաչել, գնահատել, ախտորոշել, բուժել և միջոցներ կիրառել ստորև նշվածի ուղղությամբ
Ֆիզիկական խնամքի կարիքներ.
Ցավեր (բոլոր տիպերի)
Շնչառական խնդիրներ (հևոց, հագ)
Ստամոքս-աղիքային խնդիրներ (փորկապություն, սրտխառնոց, փսխում, լուծ, բերանի չորություն, մուկոզիտ)
Դելիրիում
Վերքեր, խոցեր, մաշկի ցան, մաշկի վնասումներ
Անքնություն
Հոգեբանական/հուզական/ոգեղեն խնամքի կարիքներ.
Հոգեբանական դիստրես
Հիվանդի հարազատի և/կամ խնամողի տառապանք
Անհանգստություն/տագնապ
Ճանաչել և գնահատել, աջակցել և, հնարավորության դեպքում, հիվանդին ուղեգրել այլ մասնագետի մոտ՝ ախտորոշման և բուժական միջոցառումների անցկացման համար.
Ֆիզիկական խնամքի կարիքներ.
Հոգնածություն
Անոռեքսիա
Անեմիա
Գլխապտույտ, սեղացիա
Գերքրտնարտադրություն
Հոգեբանական/հուզական/ոգեղեն խնամքի կարիքներ.
Ոգեղեն կարիքներ և էթիկատենցիալ դիստրես
Դեպրեսիա
Ընտանիքի/խնամողի սգո և հարազատի կորստյան հետ կապված խնդիրներ
Այլ.
Խնամքի պլանավորման և կորոդինացման խնդիրներ.
Առանձնացնել առկա ռեսուրսներն ու աջակցության հնարավորությունները, մշակել և կիրառել հիվանդի կարիքների վրա հիմնված խնամքի պլան
Խնամք տրամադրել հիվանդի կյանքի վերջին օրերի/շաբաթների ընթացքում
Ճանաչել, գնահատել և կիրարկել լուծումներ՝ անհրաժեշտ դեղամիջոցների հասանելիությունը և ձեռքբերումն ապահովելու ուղղությամբ (շեշտը դնելով օփիոիդների վրա)
Ճանաչել խնամքի մեջ ընդգրկված մասնագետների հոգեւոցիալական/ոգեղեն կարիքները
Հաղորդակցման խնդիրներ.
Հաղորդակցվել հիվանդի, հարազատների և խնամողների հետ ախտորոշման, կանխատեսման *, վիճակի, բուժման, ախտանշանների և դրանց դեմ պայքարի, ինչպես նաև կյանքի վերջին օրերի/շաբաթների մասին
Հիվանդի և խնամողների հետ ճանաչել և քննարկել առաջնահերթությունները
Իրազեկել և ուղղորդել հիվանդներին ու խնամողներին՝ առկա ռեսուրսներին համապատասխան: Պալիատիվ խնամքում նրբանկատության անհրաժեշտության մասին համապատասխան իրազեկում անցկացնել այլ բուժաշխատողների շրջանում

***Ուշադրություն.** Կանխատեսման որոշումը և դրա անվտանգ փոխանցումը հիվանդին կամ հարազատներին պահանջում է համապատասխան պատրաստվածություն և գիտելիքներ:

Հեղինակային իրավունքների մասին. Այս ցանկը կարող է օգտագործվել կրթական նպատակներով՝ համապատասխան հղում անելով IAHPC–ին
 Հղում անել այսպես. International Association for Hospice and Palliative Care. IAHPC List of Essential Practices in Palliative Care. Houston: IAHPC Press, 2012.

Ծրագրի բնութագրերի և ցանկի մշակման մասին կարելի է տեղեկանալ www.hospicecare.com կայքից